ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.10.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/157

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.09.2019թ. թիվ 26/26-1/15510-2019 գրությամբ «Լյուսաշ» և «Արբակ և որդիներ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 13.09.2019թ. թիվ 17/16.4/5381-2019 գրության հիման վրա, 19.09.2019թ. թիվ 26/26-1/15510-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Լյուսաշ» և «Արբակ և որդիներ» ՍՊ ընկերություններին (հետայսու նաև՝ ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Լյուսաշ» և «Արբակ և որդիներ» ՍՊ ընկերությունների ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Լյուսաշ» և «Արբակ և որդիներ» ՍՊ ընկերությունները Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել են հետևյալը.

Մրցույթի հանձնաժողովի արձանագրության մեջ նշված էր «Լյուսաշ» և «Արբակ և որդիներ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի (հետայսու նաև՝ Կոնսորցիում) ներկայացված հայտում հայտնաբերված անհամապատասխանությունների մասին, որտեղ նշված էր պակասող նոր տեսակի լիցենզիաների ցանկ ներկայացնելու պահանջը մեկ օրվա ընթացքում:

Խնդրի պարզաբանման համար, Կոնսորցիումը կապ հաստատելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գրասենյակ, վերջիններիս հայտնել է, որ լիցենզիաները իր բոլոր ներդիրներով հայտում ներկայացված են, սակայն ստացվել է բացասական պատասխան այն մասին, որ ներկայացրած «Լյուսաշ» ՍՊԸ-ի լիցենզիաները չեն գործում, իսկ «Արբակ և որդիներ» ՍՊԸ-ի լիցենզիաների ներդիրները պակաս են պահանջվող ներդիրների ցանկից:

Այդ պատճառով Կոնսորցիումի կողմից չներկայացվեց պահանջվող շտկումները, քանի որ մեկ օրվա ընթացքում հնարավոր չէր ձեռքբերել նոր լիցենզիաներ:

Կոնսորցիումը հայտնել է, որ գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել հաշվի առնելով 2019թ. հունիսի 19-ին ընդունված ՀՀ օրենքը «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» (որի վերաբերյալ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ծանուցվել են բոլոր կազմակերպությունները):

Կոնսորցիումը խնդրել է հաշվի առնել վերը շարադրած բացատրությունը և «Լյուսաշ» և «Արբակ և որդիներ» ընկերություններին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Լյուսաշ» և «Արբակ և որդիներ» ՍՊ ընկերությունները, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/157 ընթացակարգի շրջանակներում 25.09.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չեն ապահովել իրենց ներկայացուցիչների մասնակցությունը:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.09.2019թ. թիվ 17/16.4/5381-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2019 թվականին հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/20» ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի բժշկական կենտրոնի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Լյուսաշ» և «Արբակ և որդիներ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը (հետայսու՝ Կոնսորցիում): ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ Կոնսորցիումին ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Կոնսորցիումի հայտը մերժվել է՝ արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու հիմքով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/157 ընթացակարգի շրջանակներում 25.09.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/157 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/157 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝

Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լյուսաշ» և «Արբակ և որդիներ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.09.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Կոնսորցիումի հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, որին ծանուցվել է Կարգի 41-րդ կետի համաձայն արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժվել է Կոնսորցիումի հայտը այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում չի շտկվել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.09.2019թ. թիվ 26/26-1/15510-2019 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 13.09.2019թ. թիվ 17/16.4/5381-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը:

Կարգի նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն

դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն ***կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 1.1 ենթակետով պահանջվել է հետևյալ լիցենզիան.

ԼԻՑԵՆԶԻԱ	
Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)	
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐ *(նույն լիցենզիայի անբաժանելի մաս հանդիսացող համապատասխան ոլորտի աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձանց)*	
1.	բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր
2.	բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր
3.	բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր
4.	էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգեր
5.	էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր

6.	կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լյուսաշ» և «Արբակ և որդիներ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.09.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Կոնսորցիումի հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1) Բացակայում են հրավերով պահանջվող Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) լիցենզիայի հետևյալ ներդիրները.

- էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգեր.
- էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր.
- կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր:

2) Հավելված N 1-ի 3-րդ կետում նշված է, որ պայմանագրի կատարումն իրականացվելու է թվով 10 աշխատակիցների միջոցով՝ հրավերով պահանջվող նվազագույնը 13 աշխատակիցների փոխարեն,

Կարգի 41-րդ կետի համաձայն Կոնսորցիումը ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.09.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Կոնսորցիումի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում չի շտկվել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Այսպիսով՝ ամփոփելով վերը նշված փաստերը, արձանագրում եմ հետևյալը՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը***:

Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) <u>մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:</u>

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ «Լյուսաշ» և «Արբակ և որդիներ» ՍՊ ընկերությունները թույլ են տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում և առկա են ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Կոնսորցիումը սահմանված ժամկետում չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը, մասնավորապես՝ հրավերով պահանջվող լիցենզիայի համապատասխան ներդիրները, ինչպես նաև՝ թիվ 1 Հավելվածի՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումի շտկված տարբերակը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.09.2019թ. թիվ 26/26-1/15510-2019 գրությամբ «Լյուսաշ» և «Արբակ և որդիներ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել. «Լյուսաշ» և «Արբակ և որդիներ» ՍՊ ընկերություններին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**